դին, Օշին, և այլ և երիս քորս՝ Աբլուն, Ռիթա և Թէոֆանս։

Թորոս՝ որդի Հեթմոյ՝ եղբայր Լէոնի՝ եկաց Յ. ամ։ Սա յառաջ առեալ էր զքոյր (աբքային) Կիպրոսի, և յետոյ կրօնաւորեցաւ, և Լէոն ընկալաւ զթագն 'ի Թորոս եղբօրէն. և զքոյր իւր զԱբլուն խաթուն ետ Կիպրոսի թագաւորին Ամարինի։ Եւ յորժամ Ամարին եկն 'ի Կիպրոսէ թագուհեաւն հարսանիս առնել, յայնժամ իշխանքն Հայոց բռնութեամբ կրկին զՀեթում եղին թագաւոր։ Եւ զմիւս քոյրն իւրեանց Ռիթա խաթունն ետուն Կայսերն Յունաց Մանուէլի 'ի թագուհիութիւն։ Եւ զԹէոֆանս խաթուն առաքեցին առ Կայսրն, զի որում և կամիցի՝ տացէ։ Եւ յորժամ եկին 'ի կայսերէ առնուլ զՌիթա, կրկին էջ յաթոռոյն Հեթում և յանձնեաց զիշխանութիւնն՝ Թորոսի. իսկ Թորոս և Հեթում ետուն զթագն եղբօրն

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան